Both lawmakers rejected any parallels between the ongoing opposition campaign and the 2018 mass protests that brought Pashinyan to power.

Armenia Leads the Region

Continued from page 1

market remains under-developed, which limits the financial independence of private media. State-owned media refrain from any criticism of the government. Enforcement of a new legal framework which guarantees the transparency of media ownership has yet to begin.

As a profession, journalism is disparaged and subject to especially troubling hate speech. Anti-media rhetoric from political elites, who accuse journalists of "corruption" and of being in the service of their adversaries, creates a climate of intolerance

that hinders reporters' work.

They are constantly insulted, assaulted and subject to abusive prosecution for calumny, which reinforces self-censorship.

The year 2021 was difficult for the media and for journalists because of the Nagorno-Karabakh war, scheduled elections and the pandemic. A government minister's assault on a journalist from an opposition outlet, followed by months of investigation that ended in judicial failure to recognize the minister's guilt, represents a major setback for press freedom. In general, violence against journalists goes unpunished.

Զեր Ծանուցումները Կատարեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Vahe-Vahian's Armenian Translation of Kahlil Gibran's The Prophet To Be Presented By Abril Bookstore

GLENDALE – Poet, spiritualist Kahlil Gibran's world-renowned work, *The Prophet*, translated into Western Armenian in 1984 by author and teacher, VAHE-VAHIAN, has been republished and will be presented on Thursday, May 19, 2022, at 7:00pm at the Western Diocese of the Armenian Church of North America - 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA. The book will be presented by Dr. Arpi Sarafian. Segments will be read by Hasmig Kitsinian. Event will be held in Armenian. Admission is free with reception to follow. For more information, call (818) 243-4112. The evening is organized under the auspices of His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate of the Western Diocese of the Armenian Church of North America.

The *Prophet* is a literary work that has been popular reading around the world ever since its publication in 1923. Yet, a translation that is considered by many to be the best rendering into Western Armenian of the celebrated classic, has not been available for over thirty-five years now. This second edition is a response to the numerous requests for the Vahe-Vahian translation, following the publication in the Armenian press of several articles about the Armenian translations of the Gibran classic.

This second edition is an exact paperback replica of the 1984 first



edition, except for the addition of a Preface by Arpi Sarafian. The *Prophet* is a collection of poetic essays that are philosophical, spiritual, and, above all, inspirational. Gibran's musings cover such sprawling topics as love, marriage, children, giving, eating and drinking, work, joy and sorrow, housing, clothes, buying and selling, crime and punishment, laws, freedom, reason and passion, pain, self-knowledge, teaching, friendship, talking, time, good and evil, prayer, pleasure, beauty, religion, and death. Each piece reveals deep insights into the impulses of the human heart and mind.

US, Armenia Sign MoU

Continued from page 1

"We just had a very good dialogue, exchange between us, and indeed a big part of the purpose of these meetings is to relaunch the Strategic Dialogue between the United States and Armenia that was suspended because of COVID. This is a very important vehicle by which we can continue to deepen and strengthen our relationship to pursue new areas of cooperation and collaboration, and we're very pleased to be able to do that now," Secretary Blinken said.

He noted that the Memorandum of Understanding on nuclear cooperation opens new cooperative paths for Armenia and the US and can also serve to strengthen very much the bilateral relationship.

"I just want to take this opportunity as we're sitting here to, in the first instance, praise the leadership of the prime minister and his government, the democratic reforms that they've been pursuing, the progress that continues to be made – but also to very much welcome the dialogue between Armenia and Azerbaijan, and to express real appreciation for the vision and the courage and the flexibility that the prime minister and Armenia have been showing in this process working toward what we all want, which is a lasting peace," Antony Blinken said.

The Armenian Foreign Minister said, in turn, that during the 30 years of diplomatic relations the two countries have succeeded to build very

strong relations based on common and shared values of democracy, human rights, and the rule of law.

"Now after the democratic Velvet Revolution of 2018, through joint efforts, we elevated the level of our collaboration, cooperation to Strategic Dialogue. And it is very significant that I am here also in scope of the capstone session of the Strategic Dialogue. And during this session, we focused on our democratic reforms, justice reforms, cooperation in banking sphere, looking ways of deepening cooperation in the sphere of defense, and of course prevention and fight against corruption, and many other areas. And we appreciate United States efforts to support our reforms," Minister Mirzoyan stated.

He stressed that Armenia also appreciate United States support for developing Armenia's energy sector.

"And I also want to note that we value our partnership aimed at peace and stability in our region, and in this regard I want to highlight the important role the United States of America play as a co-chair of the OSCE Minsk Group, which has a mandate from the international community to facilitate a peaceful resolution of the Nagorno-Karabakh conflict. I also appreciate United States support through the Armenia-Turkish normalization process and United States strong stance on the recognition on the condemnation of the Armenian genocide and confirmation of this stance this year, too," the Armenian Foreign Minister said.

Asdourian Family Lends Their Support To Help Realize The Dream Of Kindergartens In Jajur And Ketu Communities



SHIRAK — the communities of Jajur and Ketu in Armenia's Shirak Region now both have newly established and operating kindergartens thanks in part to the generous support of longtime Paros friends and supporters, Mark and Charlene Asdourian. More than 70 children and their families will receive the benefits of early education thanks to this important project.

In early 2021, the Armenian government working with the consolidated Community of Akhurian in Armenia's Shirak Region, launched the complete renovation of buildings to house a kindergarten in each of these two communities. Short on funds, they approached The Paros Foundation and Focus on Children Now for support to complete these two kindergartens. The Paros Foundation completed the kitchen renovation and outfitting necessary appliances, furniture and kitchen cooking supplies. Focus on Children Now furnished the kindergarten with the necessary furniture and bedding. Mr. & Mrs. Mark and Charlene Asdourian agreed to generously underwrite the budgets for both kitchens through The Paros Foundation.

"In the next month or so the kindergarten in the neighboring community of Marmarashen will also be

ready to open and launch operations," said Peter Abajian, Executive Director of The Paros Foundation. "The benefits of early education for these children and their families, and the economic impact of the new jobs created at these three kindergartens is huge. I am pleased that we were able to partner and help resolve issues at these three community's kindergartens."

Ms. Jeanette Boras, another friend and supporter of The Paros Foundation, is sponsoring the kitchen completion for the kindergarten in Marmarashen. Once opened, this kindergarten will serve at least 25 children and create at least four more full-time employment positions.

The Paros Foundation has a long history of supporting rural communities and their kindergartens. To date, the Foundation has supported with either partial or full renovations, more than 20 kindergartens throughout Armenia. Currently, the community of Nerkin Tsaghkavan is next in line for the creation of a new kindergarten. For more information or to help sponsor this project please visit www.parosfoundation.org. As with all our projects, 100% of donor contributions will be applied directly to this project with no hold back for administrative expenses.

Pallone Leads 63 Caucus Members

Continued from page 1

has committed to date is insufficient to address the overwhelming needs of these people.

"The U.S. has historically promoted peace in Artsakh through U.S. government-funded landmine and unexploded ordnance clearance efforts and enabling rebuilding by investing in similar humanitarian assistance initiatives. We are requesting a robust humanitarian assistance package for Artsakh that lives up to American humanitarian commitments."

"The United States remains uniquely positioned to make important diplomatic advances in the South Caucasus. This is especially true in Armenia, an ancient nation with a modern democracy that continues to make democratic reforms in a region dominated by autocratic leaders," the lawmakers wrote. "Providing significant assistance to Armenia will help make its people more secure, bolster its de-

mocracy, sustain economic development, stabilize its civil society, and aid its ongoing response to the COVID-19 pandemic. This critical investment will build on past support for Armenia and Artsakh by the Subcommittee and will help strengthen the U.S.-Armenia strategic partnership, solidify our presence, and grow our influence in the region."

In September 2020, Azerbaijan, actively aided by Turkey and foreign mercenaries, initiated a deadly invasion of Artsakh that led to six weeks of devastating fighting that killed more than 5,000 people and forced more than 100,000 ethnic Armenians to flee their homes. Artsakh and Armenia continue to grapple with an ongoing humanitarian crisis that resulted from the invasion. Meanwhile, Azerbaijan continues to provocatively station troops in Armenian territory while falsely declaring the land as its own and illegally holding ethnic Armenians as detainees and prisoners of war in contravention of international human rights law.

ԺԹ. ԵՆ Ի. Դարերու Օսմանեան Հոգեբանութիւնը Եւ Հայկական Ջարդերը

Շարունակուած էջ 14-էն

Հայերու կ'արգիւրուի իրենց կալուածները ծախել: Հայերու կալուածներն ու ապրանքները գնող մասնետականներուն մահապատիժ կը տնօրինուի:

3-րդ գորբաբանակի հրամանատարութիւնը հետեւեալ հրամանը կ'արձակէ. «Հայ մը պաշտպանող մասնետականներ իրենց տան առջեւ պիտի կախուին, իրենց տունը պիտի հրկիզուի. իսկ եթէ պաշտօնեայ են, գործէ պիտի հանուին ու գինուորական ատենանին պիտի յանձնուին»:



25 Մայիսին (6 Յունիս) Համաձայնական Պետութիւնները Օսմանեան կայսրութեան յուշագիր (memorandum) մը կը յանձնեն, ուր կ'ըսուի. «Հայեր բնաջինջ կ'ըլլան եւ թուրքերու մարդկութեան ու քաղաքակրթութեան դէմ գործած այս ոճրագործութեան պատճառով թէ՛ կառավարութեան անձնակազմը եւ թէ՛ բոլոր այն անձերը, որոնք այս ջարդերուն մասնակցած են կամ պիտի մասնակցին, անհատապէս պատասխանատու պիտի նկատուին»:

Կառավարութիւնը, առ ի պատասխան այս յուշագրին, Եւրոպայի իր դեսպաններուն հետեւեալ տեղեկութիւնը կը ղրկէ. «Կարին, թերձան, էկլին, Սասուն, Պիթլիս, Մուշ եւ Կիլիկիա բնակող հայերուն հանդէպ որեւէ նախագրուական միջոցառումներ չեն եղած, որովհետեւ անոնք երկրին ապահովութեան հակառակ գործունէութիւն մը ցոյց չեն տուած: Համաձայնական Պետութիւններուն մեղադրանքները սուտ են»:

Նախ այդ մարդիկը կ'աքսորուին. առաջին հերթին 20-45, ապա 15-20, յետոյ ալ 45-60 տարեկանները: Անմարդաբանի վայրերու մէջ 50-ական, 100-ական խումբերով, փամփուշտի խնայողութեան համար ալ, կացինով եւ դանակով կը ջարդուին: Էնկիւրիի (Ankara) այրերը քաղաքէն դուրս բահով, կացինով, սողցով կը կտրտուին ու ձոր կը նետուին: Տրապիզոնի (Trabizon) այրերը նաւակերու մէջ կը սպաննեն ու ծով կը թափեն: Կիլիկիայի եւ ծերերը ծով կը թափուին ու խեղդամահ կ'ըլլան: Քաղաքի հիւանդանոցին տնօրէնը որբերը կը թունաւորէ: Երգնկայի (Երեզ, Երիզաւան, Արզնկա - Erzincan) եւ Կամախի բնակչութիւնը կ'ոչնչացնեն Կամախի կիրճերուն մէջ: Կուտակուած դիակներու հետեւանքով Եփրատ իր հունը կը փոխէ: Հոն, ուր կարելի չ'ըլլար այրերը կանխաւ քսորել, ճամբան, սա կամ նա ձեւով, գանոնք խումբերէն կը հեռացուին եւ կը ջարդուին: Ջարդերուն կը մասնակցին Թեջքիլաթ-ը Մահսուսայի

խումբերը, քիւրտերը, նոյնիսկ քիւրտ կիները, շրջանի ժողովուրդը եւ աքսորականներուն իբրեւ պաշտպան տրուած ժանտարմանները:

Աքսորեալներուն մէկ մասն ալ անօթութեան, ծարաւի, յոգնութեան, տառապանքի, վարակիչ հիւանդութիւններու պատճառով ճամբան կը մեռնի: Ողջերը կը հասնին Հալէպ: Հոն, ոմանք կը փախչին ու արաբներու մօտ ապաստան կը գտնեն: Մնացեալները կը ղրկուին աւելի հարաւ՝ Տէր-Չորի (Der-el-Zor) անապատը, որպէսզի կիզիչ արեւուն տակ ոչնչանան:

Տոքթ. Պահաթին Շաքիր եւ տոքթ. Նազիմ, իթիհատ վէ թերաքքիի այս կարկառուն դէմքերը, որոնք Կ.Պոլսոյ բժշկական համալսարանի դասախօսներ էին, թոյլատրած են, որ բանակին մէջ ծայր տուած բիծաւոր տիֆի դէմ մանրէաբան բժիշկներուն պատրաստած պատուաստին մահաբեր փորձերը կատարուին աքսորականներուն վրայ: Առողջապահական տնօրէնութիւնը նախապէս արտօմած էր, որ սրսկումները կատարուէին մահապարտներու վրայ: Այս գիտական ոճրագործութիւններուն մասին գրութիւն ելած է «Թիւրքէէ Իսթանպուլ» թերթի 23 Դեկտեմբեր 1918 թիւին մէջ: Սպաննուած են նաեւ հայ բժիշկներ, թիւով 221, որոնք ջանացած են տառապողներուն օգտակար ըլլալ: Ցաւալին այն է, որ 1838-ին հայ բժիշկները սուլթան Մահմուտը համոզած են Կ.Պոլիս բժշկական համալսարան բանալ:

Աքսորի սկզբնաւորութեան անոնք, որոնք ճնշումի տակ կ'իսլամանան, քսորի չեն ղրկուիր: Երբ կրօնափոխներու թիւը նախատեսուածը կ'անցնի, անոնք ալ կ'աքսորուին:

Անատոլու պաշտօնավարող ամերիկացի հիւպատոսներու, գերման գինուորներու, բողոքական կրօնաւորներու, օտարազգի բուժքոյրերու, լրագրողներու, ջարդէն ազատած անձերու տուած տեղեկութիւններուն համաձայն, քսորը եւ ջարդը կանխապատրաստուած էին, ճանապարհին ոչ մէկ օգնութիւն կար, յարձակումներու դէմ պաշտպանութիւն չկար, քսորականներու ճամբան մօտակալ քիւրտերուն նախապէս տեղեկացուած էր:

Իսլամական օրէնքին համաձայն, յանցանք մը յանցագործ անհատին պատասխանատուութիւնն է եւ կարելի չէ այդ յանցանքին համար յանցապարտին պարագաներն ալ պատժել:

Berliner Tageblatt թերթի թղթակցին «ենթադրենք, թէ մի քանի հայեր ձեզի դաւաճանեցին, ասիկա պատճառն է, որ դուք ամբողջ ցեղ մը կ'ոչնչացնէք» հար-

ցումին՝ Թալէաթի պատասխանը կ'ըլլայ. «Մենք կը մեղադրուինք յանցաւորին եւ անմեղին միջեւ խտրութիւն չընելով: Բայց զանազանէր վաղուան յանցապարտը կրնայ ըլլալ»:

Կեսարիոյ Թալաս գիւղաքաղաքի ամերիկացի քարոզիչին՝ Genevieve Duval Irwinի տուած տեղեկութեան համաձայն, ջարդերէն տարի մը առաջ գերման սպայ մը Սեբաստիոյ մէջ իրեն ըսած է, թէ 1915-ին հայերուն սոսկալի բան մը պիտի պատահի, որ երեւակայել իսկ կարելի չէ: Ուրիշ քարոզիչ մը՝ Miss Mary L. Graffam ալ գրած է, թէ գերման սպայ մը յառաջիկայ ամառ պատահելիք դէպքերու առնչութեամբ զինք զգուշացուցած էր, որով իր եզրակացութիւնը այն է, թէ տեղահանումները կանխաւ ծրագրուած էին:

Կ.Պոլսոյ պատրիարք Յովհաննէս Արշարունի (1911-1913), Գէորգ Ե. Սուրէնեան կաթողիկոսին ղրկած 4 Սեպտեմբեր 1912 թուակիր նամակին մէջ, ի միջի այլոց, կը գրէ, թէ իշխանութիւնը «դեռ ծարաւ ունի իր երբեմնի կոտորածներուն եւ աւարները շարունակելու, նաեւ կը սպառնայ չբացնել հայ ժողովուրդը», իսկ 24 Մայիս 1913 թուակիրին մէջ ալ «...բնագաւառի հայ ժողովուրդեան վիճակը հետզհետէ կը վատթարանայ եւ հայկական ընդհանուր կոտորածի մը վերահաս վտանգին տակ կը զբտնուի...», կը գրէ: Չաւէն պատրիարք Տէր Եղիայեանն ալ ամերիկահայոց առաջնորդ Արսէն Ծ. վրդ. Վեհուհիին ղրկած 28 Դեկտեմբեր 1915 թուակիր նամակին մէջ կը գրէ. «...Որովհետեւ հայերը օրէնքէ դուրս եւ իսլամի թշնամի յայտարարուեցան եւ անոնց կեանքը, պատիւը եւ ինչքը «հելալ» նկատուեցաւ, սպանութիւնը, բռնաբարութիւնը եւ կողոպուտը կրօնական պարտականութեան վերածուեցաւ, նոյնիսկ պաշտօնական անձերու համար»: Ան կը շարունակէ գրել. «...Հայութեան բնաջինջման այս ծրագիրը, որ վաղուց յղացուած էր, գործադրուեցաւ՝ պատրուակ բռնելով վանի դէպքերը, կովկասի սահմանագլխուն հայերու շարժումները եւ ներքին գաւառներու մէջ հայերու ապստամբելու մտադրութիւնը»:

17 Յունիս 1915-ին, Գերմանիոյ Կ.Պոլսոյ դեսպան Վանկենհայմ (Hans von Wangenheim), վարչապետ Theobald von Bethmann-Hallweg-ին կը տեղեկացնէ, թէ Թալէաթ, պատերազմական վիճակէն օգտուելով, հայ ժողովուրդը բնաջինջելու նպատակ ունի: Frankfurter Zeitung թերթի 30 տարուան թղթակից եւ դեսպան Վանկենհայմի խորհրդատու Paul Weitz-ի համաձայն, գերմանները հայկական ջարդերուն միջամտութիւն չընենով՝ շատ մեծ սխալ կ'ընէին: Դեսպանատան գործակատար Kostantin Freiharr von Neurath ալ իրեն համակարծիք էր: Փանճերմենիք վարդապետութեան «աւելի տկար ազգ մը պէտք է ոչնչանայ եւ կուլ տրուի իր մեծ դրացիին կողմէ» գաղափարին հաւատացող, դեսպանատան ծովային ուժերու կցորդ Human գերմանական միջամտութեան համարժուտ չէր:

Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան խորհրդական (undersecretary) Zimmerman,

որ հետագային նախարար կ'ըլլայ, 4 Հոկտեմբեր 1915-ին Zeitung Vedlag թերթին մէջ հետեւեալ կը գրէ. «Հայերու պատճառով թուրքերու հետ մեր փոխարարութիւնները վտանգելը շիտակ չէ: Անշուշտ թէ այս անմեղ ժողովուրդին թուրքերու կողմէ կրած տառապանքը շատ յուզիչ է: Սակայն հայերը պատերազմական ճակատներու վրայ թուրքերու օգնութեամբ քաջաբար մարտնչող եւ արիւն թափող մեր եղբայրներն ու գաւակներն աւելի մօտ չեն մեզի»: 29 Սեպտեմբերին, Gottlieb von Jagow, այն ատեն տակաւին արտաքին գործոց նախարար, երեսփոխանական ժողովին մէջ արդէն նման արտայայտութիւն մը ունեցած էր:

Այսպէս, ամբողջ ազգ մը բոլորին աչքին առջեւ կ'ոչնչացուէր եւ ոչ ոք այս անմարդկային վիճակին կրնար արգելք հանդիսանալ: Համաձայնական Պետութիւնները արդէն օսմանցիներուն դէմ կը պատերազմէին, որով ջարդերը կեցնելու համար բան մը չէին կրնար ընել: Թալէաթի եւ Էնկիւրիի հաշուածն ալ արդէն այս էր:

Դեսպան Վանկենհայմի մահէն յետոյ, նոր դեսպանը՝ Count Wolff Metternich, կը յաջողի գերմանական մամուլին մէջ հայկական ջարդերուն դէմ պայքար մը բանալ: Թէեւ այս վիճակը երկու երկիրներու փոխարարութիւններուն կրնար վնասել, սակայն դեսպանը համոզուած էր, որ Օսմանեան կայսրութիւնը առանձինն հաշտութեան համաձայնագիր պիտի չստորագրէր, նամանակահատուկ որ անգլիական կառավարութիւնը ներկայ թուրք կառավարութեան հետ բանակցիլ պիտի չուզէր:



Չաւէն պատրիարք Տէր Եղիայեան

Աքսորը եւ ջարդերը կը շարունակուէին:

Այդ օրերու գերմանական քաղաքականութիւնը շատ յստակ էր. Փոքր Ասիայէն ոչ-մասնետական տարրը հեռացնել եւ տարբեր վայրերէ բերուած մասնետականները անոնց տեղ տեղաւորել: Գերմանիա այս փանճերմենիք վարդապետութիւնը կը գործադրէր: Որոշ թիւով ֆրանսացիներ եւ պելճիքացիներ կը տեղահանուէին ու անոնց տեղ գերմանացիներ կը բերուէին: Աւստրա-Հունգարիան ալ մեծ թիւով սերպեր ջարդած, մաս մըն ալ դէպի երկրին խորքը տարած էր:

Փանճերմենիք քարոզիչներէն

ԺԹ. ԵՆ Ի. ԴԱՐԵՐՈՒ ՕՍՄԱՆԵԱՆ ՀՈԳԵՐԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ

Շարունակուած էջ 15-էն

Dr. Paul Rohrbach տակաւին 1913-ին խորհուրդ տուած էր հայերը տեղահանել, Հիճազի երկաթուղիին շուրջ տեղաւորել եւ անոնց տեղ կովկասի, Մակեդոնիայի եւ Պոսնիայի մասնատականները տեղաւորել:

Թուրքերն ալ ճիշդ այդ ըրին: Ըստ Ամերիկայի դեսպան Հենրի Մորկընթաուի, հազիւ թէ հայ գիւղացիները իրենց տեղերէն կը հեռացուէին, ուրիշ վայրերէ բերուած մասնատական գաղթականները (muhajir) անոնց տեղերը կը տեղաւորուէին: Երբ աքսորեալ հայեր չարձակումներու կ'ենթարկուէին, անօթութենէ, ծարաւէ ու յոգնութենէ կը մեռնէին, մինչդեռ մուհաճիբներու տեղափոխութեան ընթացքին անոնցմէ ոչ մէկը չարձակումի ենթարկուած կամ անօթութենէ եւ ծարաւէ մեռած էր:

Առաջին Աշխարհամարտը սկսելէն մի քանի ամիս առաջ, Օսմանեան կառավարութիւնը Անատոլիոյ ծովեզերեայ քաղաքները բնակող 100.000 յուն եգիպտական կղզիները կ'աքսորէ: Կ.Պոլիս գտնուող գերման ծովակալ Usedom Հենրի Մորկընթաուի կ'ըսէ, թէ այս տեղահանումը գերմանները թելադրած էին:



Տոքթ. Եոհաննէս Լեփսիուս

Գերմանացի կղերական տոքթ. Եոհաննէս Լեփսիուս (Dr. Johannes Lepsius) Կ.Պոլսոյ մէջ ջարդերուն կապակցութեամբ տեղեկութիւններ հաւաքելէ ետք, գանոք «Գաղտնի տեղեկագիր» խորագրով կը հրատարակէ: Այս 303 էջերէ բաղկացեալ գիրքը երեսփոխաններուն, եկեղեցականներուն, հանրային գործիչներուն կը բաժնէ: Ան գիրքին նախաբանին մէջ գրած է. «Քրիստոնէութեան ամէնէն հին ժողովուրդը բնաջինջ ըլլալու վտանգին մէջ է...: Հայ ժողովուրդի եօթն վեցը իր ստացուածքներէն կողոպտուած է, արտաքսուած իր ընտանեկան երդիքէն, եւ եթէ չէ իսլամացած, սպաննուած կամ անպատին մէջ տարագրուած է»: Օսմանեան դեսպան Իպրահիմ Հաքքը փաշայի առարկութեան հետեւանքով՝ արտաքին գործոց նախարարութիւնը մնացեալ հատորները կը բռնագրաւէ: Ան գերմանական քաղաքականութեան դէմ չարտայայտուելու խոստումով կը մեկնի Հոլանտա, ուր կը շարունակէ իր մարդասիրական աշխատանքները: Օսմանեան կառավարութիւնը 10 Օգոստոս 1916-ին հռչակուած «Կանոնագիր Հայոց Կաթողիկոսութեան եւ Պատրիարքութեան» օրինագծով գործածութենէ կը դադարեցնէ 1863-ին վաւերացուած Հայկական Սահմանադրութիւնը: Էջմիածնայ կաթողիկոսին Կ.Պոլսոյ պատրիարքութեան վրայ ունեցած իշխանութիւնը անընդունելի կը նկատէ: 1895-էն ի վեր աթուր թափուր մնացած Աղթամարի կաթողիկոսութեան վերջ կու տայ: Կ.Պոլսոյ պատրիարքը՝ Ջաւէն Տէր Եղիայեան սրբազանը, կը պաշտօնազրկէ եւ Պաղտատ կ'աքսորէ: Պատրիարքութիւնը եւ Սիսի կաթողիկոսութիւնը կը միացնէ ու կաթողիկոս-պատրիարքը՝ Սահակ կաթողիկոսը, Երուսաղէմ կ'աքսորէ: 1916-ի աւարտին, այս անսահման ժամանակը եւ ջարդերը վերջ գտած էին: Դեսպան Հենրի Մորկընթաու կը գրէ. «Ըստ թուրքերուն, հպատակ ժողովուրդներն այնքան ատեն որ թուրքերու համար օգտակար են՝ ապրելու իրաւունք ունին: Երբ այս օգտակար ըլլալու վիճակը վերջ գտնէ, անոնք պէտք է բնաջինջուին»: Ըստ Հենրի Մորկընթաուի, թալէաթ իրեն ըսած է. «Եթէ կ'ուզենք մեր ձեռքը մնացած հողերով մեր գոյութիւնը շարունակել, պէտք է ձերբազատուինք այս օտար ժողովուրդներէն»: Այն, ինչ որ Համիտ չկարողացաւ իրագործել, Երիտթուրքերը իրենց համար գլխաւոր նպատակ դարձուցին եւ ճիշդ այդ պատճառով ալ թալէաթ իր բարեկամներուն ըսած է, թէ «սուլթան Համիտի 30 տարուան մէջ չկարողացածը, ես երբք ամսուան մէջ կատարեցի»:

31 Օգոստոս 1916-ին, թալէաթ Գերմանիոյ դեսպանատան ներկայացուցիչ Furst Hohenlohe-Langenburg-ին «Հայկական Հարցը այլեւս գոյութիւն չունի», ըսած է: Այդ ըմբռնումով ալ Մորկընթաուին պահանջած է իրեն յանձնել հայերու ամերիկեան ապահովագրական ընկերութիւններուն մօտ գտնուած ապահովագրերը: Թալէաթ հայոց աքսորն ու բնաջինջումը կ'արդարացնէ հետեւեալ ձեւով. «Հայեր ի վնաս թուրքերու հարստացած էին, ուստի թուրքերուն օգնելով՝ թուրքերուն ձախողութեան պատճառ եղած էին, ինչպէս նաեւ կ'ուզէին անկախ պետութիւն հաստատել եւ թուրքերու վրայ իշխել»:

1 Յունուար 1917-ին, Պեռլի-նի վեհաժողովի համաձայնութիւնը չեղեալ կը նկատուի: 61-րդ յօդուածն ալ իր արժէքը կը կորսնցնէ: 4 Փետրուարին, թալէաթ վարչապետ կը նշանակուի՝ փաշայի աստիճանով: 8 Հոկտեմբեր 1918-ին, գինադարի խնդրանքով, թալէաթ փաշայի գլխաւորած կառավարութիւնը կը հրաժարի: 14 Հոկտեմբերին, Ահմեթ Իզզեթ փաշա կը կազմէ նոր կառավարութիւն: 30 Հոկտեմբերին կը ստորագրուի Մուտրոսի (Mudros) գինադարը: Չինադարէն անմիջապէս յետոյ, Նոյեմբեր 1-ի գիշերը, թալէաթ, ինվեր, ձեմալ, տոքթ. Պահաթին Շաքիր, տոքթ. Նազըմ, Պետրի, Ազիմ եւ մի քանի փոքրաստիճան սպաներ գերմանական ընդծովեացով մը Օտեսա կը փախչին: Ինվեր Խրիմի վրայով կ'անցնի Պաթոմ, ձեմալ՝ Աֆղանիստան, թալէաթ եւ միւսները՝ Պեռլին: Սուլթան Իեշատի մահով՝ 1918-ի Ապրիլին գահ կը բարձրանայ վահստետին, որ իթթիհատա-

կաններու դէմ միշտ ստեղծութիւն ունեցած էր: Ան վարչապետէն կը պահանջէ իթթիհատականներու հրաժարումը: Նոյեմբեր 8-ին, Ահմեթ Իզզեթ փաշա կը հրաժարի եւ Թեւֆիք փաշա 18 Նոյեմբերին կը կազմէ նոր կառավարութիւն:

Ջաւէն պատրիարք կը գրէ. «1915-ին իթթիհատական կառավարութիւնը օրէնքէ դուրս ձգած էր տէրութեան հայ հպատակները, թէեւ առանց պաշտօնական յայտարարութեան: Գրեթէ նոյն վերաբերումը կը շարունակուէր օրուան կառավարութեան կողմէն ալ, առանց ջարդի եւ կողոպուտի: Թուրք կառավարութիւնը ոչ մէկ շարժում ըրաւ գինադարէն ետք հայ տարրին սիրտին մէջ իր նախորդին բացած վէրքը դարմանելու: Կառավարութիւնը եւ ժողովուրդը անտարբերութեամբ եւ կարծես ներքին ուրախութեամբ մը կը դիտէին իրենց դարաւոր հայրենակիցներուն տուայտանքն ու տառապանքը» (էջ 306): Դեկտեմբեր ամսուան մէջ, յարթական Համաձայնական Պետութիւնները Կ.Պոլսու իրենց հակաշուքին տակ կ'առնեն: Սուլթան վահստետինի հրամանով Հիւրրիէթ վէ Իթիլաֆ կուսակցութիւնը կը վերահաստատուի:

16 Դեկտեմբեր 1918-ի կայսերական հրամանով, 8 Յունուար 1919-ին կը կազմուի գինուորական ատեան՝ դատելու իթթիհատ վէ Թերաքքի կուսակցութեան կեդրոնական կոմիտէի անդամները, Սալիթ Հալիմ եւ Թալէաթ փաշաներու կառավարութիւններուն նախարարները՝ պետութիւնը առանց երեսփոխանական ժողովի որոշման Ա.

Աշխարհամարտին մասնակից դարձնելու եւ հայկական ջարդերը կազմակերպելու ամբաստանութեամբ:

4 Մարտ 1919-ին, Թեւֆիք փաշայի կառավարութիւնը կը հրաժարի եւ Տամաթ Ֆերիթ փաշա Հիւրրիէթ վէ Իթիլաֆ կուսակցութեան անդամներով կը կազմէ նոր կառավարութիւն:

Մարտ 8-ին, Երիտթուրքերու պարագլուխներու անունները՝ 31 կուսակցական եւ կառավարական բարձրաստիճան գործիչներ, կը յանձնուին գինուորական ատեան: Դատարարութիւնները կը սկսին 27 Ապրիլ 1919-ին եւ կը տեւեն մինչեւ Յունիս 26՝ ամբաստանեալներէն 20-ին ներկայութեան եւ 11-ին բացակայութեան: Դատարարութիւնը կ'արձակուի Յուլիս 5-ին:

Դատարարութեան ներկայացուած զանազան փաստաթուղթերէ, ծածկագիր հեռագրերէ, նամակներէ ի յայտ կու գայ, որ արեւմտահայութեան տեղահանութիւնները եւ կողոպտանքները գինուորական եւ կարգապահական միջոցառումներ չէին, սահմանափակ կամ տեղական բնոյթ չունէին, այլ հայերը ոչնչացնելու նպատակով կանխամտածուած ծրագիր մըն էր, որ կուսակցութեան կեդրոնական կոմիտէին միջոցաւ տրուած յատուկ հրահանգներով եւ գաղտնի հրամաններով իրագործուած էր: Կովկասեան ձախտի 3-րդ բանակի նախկին հրամանատար Վեհիք փաշայի վկայութեան համաձայն, հայերու բնաջինջումը եւ ինչքերու կողոպուտը կուսակցութեան կեդրոնական կոմիտէին կողմէ վճռուած էր: Դատարանը ի բացակայու-

Շար.ը էջ 19



DETERMINED & COMPASSIONATE CRIMINAL DEFENSE

- JUVENILE DEFENSE
- DOMESTIC VIOLENCE
- ASSAULT & BATTERY CHARGES
- DRIVING UNDER THE INFLUENCE (DUI)
- VEHICULAR OFFENSES/HIT AND RUN
- IMMIGRATION - MOTION TO VACATE A PLEA
- ROBBERY AND THEFT OFFENSES
- ASSAULT WITH A DEADLY WEAPON
- CRIMES INVOLVING POLICE OFFICERS
- CRIMINAL THREATS
- WEAPON CHARGES
- DRUG OFFENSES
- SEX CRIMES
- THEFT CRIMES
- GANG CRIMES



ALICE TAVOUKJIAN Attorney At Law

At the law office of ALICE TAVOUKJIAN, we provide zealous representation to achieve the best possible outcome on your behalf.

LAW OFFICES OF
ALICE TAVOUKJIAN, PC
 WWW.TAVOUKJIANLAW.com
 135 E. Valley Bl, #B, Alhambra, CA 91801
 CALL FOR A FREE CONSULTATION
626.386.8606

Նոր Կիրակի Նոր ժողովուրդ Յարութեամբ Եւ Նահատակաց Սրբադասութեամբ

Նոր Կիրակին Սուրբ Յարութեան յաջորդող կիրակին է որ այս տարի կը հանդիպի Ապրիլեան Նահատակներու Սրբադասման տարեկիցին կրկնապէս նորոգելով հայորդիք աշխարհով մէկ:

ԴՈՎՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Վերանորոգման Զուգադիպութիւն

Կրկնազատիկը Նոր Կիրակին է Հայ Եկեղեցւոյ սրբազան տօներու շարքին, հաստատ այն իրավիճակով որ մնացեալ կիրակիներէն մշտանորոգ տարբերութեամբ կը հանդիպի Հայ ժողովուրդին, տարին անգամ մը, յայտնապէս նորոգուած Քրիստոսի Յարութեամբ: Հայ Եկեղեցւոյ Նոր Կիրակիի յատուկ շարականը բարձրագոյն կ'երգէ ըսելով «Նորոգեցարուք նորոգութեամբ Յարութեամբն Քրիստոսի նոր ժողովուրդ:»

Սոսկ զարդարանք չէ այս Նոր Կիրակիին պատգամը, այլ հրաւեր մը կրկին անգամ «Նոր ժողովուրդ» դառնալու, տարբեր տարուան միւս կիրակիներէն, մանաւանդ երբ այս տարի կը գուզադիպի մեր նահատակներու սրբադասման ճիշդ օրը: Ասկէ եօթ տարիներ առաջ ապրիլեան Հայ նահատակները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ սրբադասուեցան Յեղասպանութեան հարիւրամեակին: Այլեւս հոգեհանգիստ չէ որ կը կատարենք, այլ սրբադասման յատուկ Բարեխօսական Կարգ:

Նորոգուիլը Կենսական

Կենսքի մէջ նորը միշտ փափաքելի է իր նիւթական բովանդակութեամբ, հաճելի է եւ ցանկալի: Մարդիկ հինը նորով կը փոխարինեն որպէս ցանկալի անհրաժեշտութիւն: Այս պարագային սակայն նորագոյն ուղղութեամբ մեր հին անձն ու ցանկութիւնները կը նորոգուին, ու այդ դրական ուղղութիւնը Քրիստոսի Յարութեամբ նորոգուիլն է: Իսկապէս բացառիկ առիթ մը եւ հրաւեր մը որ զմեզ կը բերէ Աստուծոյ դէմ յանդիման անմահութեան շունչով եւ վաւերականութեամբ: Ինչ որ նոր կը նկատենք նիւթական աշխարհի չափանիշով կ'անցնի ու կը հնանայ, մինչդեռ Յարութեան աւետիսով վերանորոգուած մարդկային տկարութեանց կ'աւետէ հին անձը չկորսնցնել եւ սակայն անպայման նորոգել զայն:

Այս առիթով անհրաժեշտ կը նկատենք քննարկել հակիրճ կերպով Նոր Կիրակիի պատգամը ուր այնքան հրճուողին Յարութեան լոյսը կը լուսաւորէ մարդոց կեանքի օրերը, յիշեցման կարգով մեր մօտաւոր անցեալի հերոս հոգեւորական եւ ազգային անձերու անձնուէր գործերը, այս անգամ մեր նահատակներու սրբադասման աստուածատուր ներգործութեամբ: Անոնք դիմադրեցին մեծագոյն չարիքին մեծագոյն շնորհներով, վերանորոգեցին ամէն ինչ եւ ճամբան հարթեցին նահատակներու խմբովին սրբադասումին:

Յեղասպանութենէն Սրբադասում

Անցնող հարիւրամեակի ընթացքին խլեակներու վերածուած որբերու եւ տնանկներու կարաւանները հետզհետէ Յարութեամբ նոր ժողովուրդ դարձան: Նոյն տասնամեակները իրենց կարգին կեանքի վերածեցին ինչ որ մահաբեր ու ամպամած խորշակները խեղդած էին սփիւռքի տարածքի որբացած

Հայ ժողովուրդը: Չմոռնանք երբեք մեր նուիրեալ հոյլ մը հոգեւորականներն ու աշխարհականները որոնք հրաշքի համագոր վերակերտեցին հերոսաբար մեր պատմութիւնը, եւ որպէս Արմաշական կրօնաւորներ վկաները հանդիսացան անցեալ դարու սկիզբը, վերանորոգելով Երուսաղէմի հայոց Պատրիարքութիւնն ու Կիլիկիոյ վտարանդի Կաթողիկոսութիւնը, եւ 1926 թուին վերապրող մեծ բարերարներ Մելգոնեան Եղբարք հիմնեցին Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը: Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսը, Եղիշէ Դուրեան եւ Զաւէն Տ Եղիայեան Պատրիարքները, Բաբգէն Կիւլեսէրեան Աթոռակից Կաթողիկոսը, Թորգոմ Գուշակեան եւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքները դարձան վերանորոգիչ դիւցազուն կրօնապետները որոնք նորոգուեցան Յարութեան փրկարար աւետիսով ու նորոգեցին հայութեան կեանքը անմիջական անցեալի մահաբեր խորշակներէն, բանիւ եւ մանաւանդ գործով, զանոնք դարձնելով ՆՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴ:

Այսօր Նոր Կիրակի եւ Ապրիլ 24

Այսօր կանգնած մեր մերձաւորագոյն Սուրբ Նահատակներու յիշատակին առջեւ, Հայաստանեայց Եկեղեցին իր հաւատաւոր ժողովուրդով պէտք է նորոգուի ճիշդ այնպէս ինչպէս մեր նախորդ սերունդի վերոյիշեալ նուիրեալներ վերականգնեցին յետեղեռնեան հայ ժողովուրդը: Այս Կիրակին սակայն հայ ազգն ու եկեղեցին ընկճուած կը դիմաւորեն Յարութեան յոյսն ու լոյսը Արցախեան վերջին ահաւոր պատերազմին հետեւանքով: Անապահով եւ մտահոգ կը դիմենք մեր Ապրիլեան նորօրեայ Սուրբերու միջնորդութեան: Որքան հարազատ կը գտնենք Շարականին տողերը, հաստատ իմանալով որ Հայ ժողովուրդին ուղղուած են անոնք որպէս յաւերժական հրաւեր հայոց դէմ գործադրուած մերօրեայ հալածանքներուն որպէս սպեղանի:

Հայոց դէմ գործադրուած ցեղասպանութեան զոհ եւ պատարագ եղող միլիոն եւ կէս հայորդիներու սրբադասումը ահա եօթ տարիներ անց կը բարեխօսեն Յարութեալ Փրկչին մօտ որպէսզի մանաւանդ այսօր մեր հայրենիքն ու շուրջած ժողովուրդը ազատի նորօրեայ ցեղասպանութենէ:

Կրկին Խառն եւ Շփոթ

Այսօր սակայն աշխարհ իրար անցած է նորագոյն անիրաւ եւ կործանարար պատերազմով որ տակաւին կրակներու ենթակայ դարձուցած է քրիստոնեայ երկիր մը այս ժամերուն նոյնիսկ: Կը յամենայ խաղաղութեան յոյսն ու լոյսը: Երկիր մը ամբողջ մեր աչքին առջեւ կործանուած: Կը փշաքաղուիս անձայն դիտելով ահաւոր փլատակներն ու ժողովուրդին ցաւն ու կոծը, թափառումներն ու անկեալ վիճակը: Քրիստոնեայ դրացի երկիրներ, բռնակալ ուժի ներքեւ ատելութիւն կը սերմանեն: Հայ ժողովուրդը դեռ նոր անցաւ նոյն ճանապարհէն ու կը տուայտի տեսնելով այս անգամ արեւելքի եւ արեւմուտքի հսկա-



յական վտանգները: Իսկոված հայրենիք: Այսօր քաջ գիտնալու ենք թէ հայրենիք ունենալը չի բաւեր, անոր տէրն ըլլալն անսակարկ եւ լիաբուռն ծառայութիւնն է միակ գրաւականը որ պիտի առաջնորդէ Հայ ժողովուրդը Նոր Կիրակիի իսկական վերանորոգութեան: Փառք եւ պատիւ հազարաւոր երիտասարդ հայ զինուորներուն որոնք երէկ ինկան մեր աչքերուն առջեւ: Անոնցմէ իւրաքանչիւրը լուսատու եւ պահպան ջահ մըն է կանգնած Հայրենի սահմաններու երկայնքին: Սփիւռքը կը կարծենք թէ կը փայլի եւ սակայն հայրենի հողն է կենսական նորուն փայլքը Քրիստոսի Յարութեան լոյս գերեզմանէն պէտք է ճառագայթէ:

ՄԱՍԻՍ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

«Ռեալը» 35-րդ Անգամ Հռչակուեցաւ Սպանիայի Ախոյեան



Մատրիտի «Ռեալը» 35-րդ անգամ նուաճեց Սպանիայի ախոյեանի տիտղոսը առաջնութեան աւարտէն չորս հանգրուան առաջ:

Խաղացի Կառլո Անչելոտիի գլխավորած խումբը 34-րդ հանգրուանին ընդունեց Պարսելոնայի «Էսպանիոլին» եւ առաւելութեան հասաւ 4:0 հաշուով: Դուբլի հեղինակ դարձաւ սպանացի յարձակող Ռոդրիգոն: Աչքի ինկան նաեւ սպանացի յարձակող Մարկո Ասենսիոն ու ֆրանսացի յարձակող Քարիմ Բենզեման: Հանդիպման խորհրդանշական առաջին հարուածը կատարեց սպանացի թենիսիստ Ռաֆայել Նադալը:

Արքայական խումբը վաստակեցաւ 81 կէտ: Երկրորդ տեղը գտնուող «Սելթիան» ունի 64 կէտ: Մէկ հանդիպում քիչ կատարած «Պարսելոնան» 63 կէտով երրորդն է:

«Ջենիթը» Չորրորդ Անգամ Անընդմէջ Նուաճեց Ռուսաստանի Ախոյեանի Տիտղոսը



Սանկտ Փետերսպուրկի «Ջենիթը» Ռուսաստանի առաջնութեան 27-րդ հանգրուանին 3:1 արդիւնքով պարտութեան մատնեց Մոսկուայի «Լոկոմոտիվին» եւ չորրորդ անգամ անընդմէջ նուաճեց ախոյեանի տիտղոսը:

«Ջենիթը» վաստակած է 61 կէտ եւ առաջնութեան աւարտէն 3 հանգրուան առաջ 9 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող Մոսկուայի «Տինամոյէն»:

«Մանչեսթըր Սիթին» Խնդիրներ Չունեցաւ Եւ Առաջինն Է

Անգլիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթին» հիւրընկալեց «Լիտո Շոննայթըտին»: Կատարուեցի Խոսէպ Գուարդիոլայի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ 4:0 արդիւնքով:

«Լիվերփուլը» մրցակիցի խաղադաշտին վրայ հանդիպեցաւ «Նիւքասլին» հետ: Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած խումբը առաւելութեան հասաւ նուազագոյն հաշուով:

«Լիվերպուլի» միակ կողմը 19-րդ վայրկեանին խփեց գնեացի կիսապաշտպան Նաբի Կեյտան, որուն կողային փոխանցում կատարեց փորթուկալացի յարձակող Դիոգո Ժոտան:

34 խաղէն յետոյ «Մանչեսթըր Սիթին» 83 կէտով առաջատարն է, «Լիվերփուլը» հետ է 1 կէտ: «Լիդս Յունայթըդը» 7-րդն է՝ 34 կէտ:

«Ռեալը» Դէմ Զէ Ռոնալտուի Վերադարձին

Սպանիոյ նորընծայ ախոյեան Մատրիտի «Ռեալը» դէմ չէ անգլիական «Մանչեսթըր Շոննայթըտի» փորթուկալացի յարձակող Կրիշտիանու Ռոնալտուի վերադարձին, կը հաղորդէ Mirror-ը: 37-ամեայ ֆուտպոլիստը կը ցանկայ հեռանալ մանչեսթըրեան ակումբէն, որը մասնակցութիւնը Ախոյեաններու Լիգային քիչ հաւանական է:

Ռոնալտուին կը ցանկայ վերադառնալ Արքայական ակումբ, որը կազմէն խաղցած է 2009-2018-ին՝ նուաճելով 15 տիտղոս, 4 անգամ արժանանալով «Ոսկէ գնդակին»:

«Ռեալ Մատրիտէն» Քրիս Ջոնզը Կը Միանայ Հայաստանի Պասքետպոլի Հաւաքականին

Եւրոպայի առաջնութեան Շ բաժնի մրցաշարերուն կը տեսնենք հայկական պասքետպոլի ապագան: Հայաստանի ազգային հաւաքականէն մեծ սպասելիքներ ունինք. խումբը կը ներկայանայ նոր հանրայայտ գլխավոր մարզիչով եւ նոր, շատ ուժեղ պասքետպոլիստ Քրիս Ջոնզի մասնակցութեամբ:

Այս մասին NEWS.am Sport-ի թղթակիցի հետ զրոյցի ընթացքին ըսաւ Հայաստանի պասքետպոլի ֆեդերացիայի փոխնախագահ Վահագն Յարութիւնեանը:

Պասքետպոլի տղամարդկանց եւ կանանց Հայաստանի հաւաքականները կը պատրաստին Յունիսի 29-էն Յունիսի 28-ն տեղի ունեցող Եւրոպայի Շ բաժնի առաջնութեան:



Մոհամէտ Սալահը՝ Անգլիոյ Տարուայ Լաւագոյն Ֆուտպոլիստը

«Լիվերփուլի» եւ Եգիպտոսի հաւաքականի յարձակող Մոհամէտ Սալահը դասուած է տարուայ լաւագոյն ֆուտպոլիստ Անգլիոյ մէջ, կը հաղորդէ Անգլիոյ ֆուտպոլային լրագրողներու ընկերակցութեան մամուլի ծառայութիւնը:

Ընկերակցութեան անդամներու քուէարկութեամբ Մոհամէտ Սալահը ստացած է ձայներու 48 տոկոսը՝ լաւագոյն եռեակի մէջ ետ թողելով «Մանչեսթըր Սիթիի» պեւլիզացի կիսապաշտպան Քեւին Տէ Պրոյնէին եւ Լոնտոնի «Ուեստ Հեմի» անգլիացի կիսապաշտպան Տեքլան Ռայսին:

Սալահը այս վարկածով լաւագոյնի մրցանակին արժանացած էր նաեւ 2018 թուականին:

Անգլիայի ընթացիկ առաջնութեան Սալահը մասնակցած է 31 հանդիպման, նշանակած է 22 կոլ, կատարած է 13 կոլային փոխանցում:



«Միլան» Յաղթեց «Ֆիորենթինային» Եւ 5 Կէտ Առաջ Է «Ինթերնէն»

Իտալիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին առաջատար «Միլանը» ընդունեց «Ֆիորենթինային»: 82-րդ վայրկեանին աչքի ինկաւ փորթուկալացի յարձակող Ռաֆայել Լեաուն՝ իր խումբիմ ապահովելով յաղթանակը:

«Միլան» 77 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 5 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Ինթերնէն», որը 1 հանդիպում նուազ կատարած է: «Ֆիորենթինան» 7-րդն է՝ 56 կէտով:

«Միլանն» ու «Ինթեր» ապահոված են Ախոյեաններու Լիգայի խմբային փուլի ուղեգրերը:

«Ռոման» Զյաղթեց Տնային Խաղը

Իտալիոյ առաջնութեան 35-րդ հանգրուանին «Ռոման» տանը մրցեցաւ «Պոլոնիայի» հետ:

Փորթուկալացի Ժոզէ Մուուրինիոն բաւարարուեցաւ հաւասար արդիւնքով: Խումբերը կոլ չկարողացան նշանակել:

Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը մկանային վնասուածք ունէր եւ կը բացակայէր «Ռոմայի» խումբէն:

«Ռոման» 59 կէտով 5-րդն է: Նոյնքան կէտ ունի 6-րդ տեղը ընթացող «Լացիոն»:

Ռուսաստան Զրկուեցաւ Համաշխարհային Ռուսնողական Խաղերը Կազմակերպելու Իրաւունքէն

Ռուսնողական Միջազգային Ֆեդերացիայի (FISU) գործադիր կոմիտէի որոշմամբ՝ Ռուսաստանը զրկուեցաւ Համաշխարհային ամառային ուսանողական խաղերը կազմակերպելու իրաւունքէն:

Որոշման պատճառը Ռուսաստանի գինուած ուժերու ներխուժումն է Ուքրանիա:

Աւելի վաղ Ռուսաստանը զրկուած էր 2023թ. տափօղակով հոքիի աշխարհի առաջնութիւնը կազմակերպելու իրաւունքէն: